



ՀՈՎՈՒՆԵՐԳՈՒԹԻՒՆ

Իրիկնամուտ մը հանդարտ, խաղաղութեան համգունակ.
Անտառն այս՝ լուռ կը փակուի իր թւերուն վրայ մըթին...
Պատուհաններ հեռակայ, օ՛ր քաղցրութիւն սէրերու.
Ոսկեգանակ փռչիներ ու թիթեռներ ցայգային...:

Երկու ազնակ դռատի — աղանձներ՝ ազուական —
Փոքրիկ երգի մը խաղերն ահա կարծես կը ձայնեն...
Հոգիիս մէջ մեծաւոր որքա՛ն խռովք, այս որքա՛ն
Դատնութիւններ... Կը բացուին հեծկըլտումներ խաւարէն...

Իրիկնամուտ մը լըռին, խաղաղութեան համգունակ...
Տարերքին մէջ հոգիիս կըզգամ մերժում մ'ահաւոր:
Տարօրինակ հանդիպում. — ցակատագիրն աշխարհի
Այս անկիւնին կը թռչի ինծի ա՛յլ հեզմամբ մը խոր...

Բեռներէն իրենց սարսուղ հորիզոններ հեռակայ
Կը մխրճեն գանկիս մէջ ծաղրապատկեր մը շրփոթ,
Շառաչածայն ովկէաններ՝ զըրահապատ բերդերու
Կմախքներով կը խաղան: Վերջին հեւքեր մահաւօտ...

Մինչ գանկերէն ծանրաբեռն կը պայթին այդքան արիւն,
Աստղերն ահա կը գըծեն շրջանն իրենց համապագ,
Կը թաւային երկնային լոյսերն հազար մըդոններ...:
Յո՛յս մը, յո՛յս մը, գթութի՛ւն, արիւնջխանն ո՛վ երագ...:
Իրիկնամուտ. լուռ գիշեր: — Խաղաղութեան ի՛նչ հեզմամբ...:

ԲԻԻԶԱՆԴ ԹՕՓԱԼԵԱՆ